ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 մարտի 2015 թվականի թիվ 47 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Քաղաքացիական ծառայության մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թ. մարտի 11-ի <Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություն կատարելուն համաձայնություն տալու մասին> N 203 - Ա որոշումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի աշխատակազմի՝ զորահավաքային նախապատրաստության բաժնի՝

1) գլխավոր մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 70-3.1-17) անձնագիրը (Հավելված).

2) վարիչի /ծածկագիր՝ 70-2.2-24/ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի՝

ա/ 4-րդ կետի «հաշվետու է Բաժնի աշխատողը» բառերը փոխարինել՝ «հաշվետու են Բաժնի աշխատողները» բառերով.

բ/ 5-րդ կետի առաջին պարբերության «մասնագետը» բառը փոխարինել՝ «մասնագետներից մեկը» բառերով.

գ/ 5-րդ կետի 2-րդ պարբերության «մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրան» բառերը փոխարինել՝ «մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց» բառերով:

3) գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 70-3.1-16/ քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրի 5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5.Բաժնի գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի վարիչը, կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետը.

Բաժնի գլխավոր մասնագետը Բաժնի վարիչի, կամ Բաժնի մյուս գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ. ԱԲՈՎՅԱՆ

2015թ. մարտի 16
ք.Իջևան